Գործ թիվ ԵԴ/8023/02/23

# Վ Ճ Ի Ռ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

**17 ապրիլի 2023թ.** **ք. Երևան**

**Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)**

**նախագահությամբ դատավոր՝** **Տ. Գրիգորյանի**

Քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<ԱՐՏԴԻԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) (գրանցման համար 13.110.00954, հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Գրիբոյեդովի 24) ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող) (հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Մարտունի, Շահումյան փող. 2)՝ թիվ ՀՀ ԳՄ ՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/04 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին,

## Պ Ա Ր Զ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Հայցվոր <<ԱՐՏԴԻԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի՝ թիվ ՀՀ ԳՄ ՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/04 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանը 07.03.2023թ. որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույց պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին, որտեղ նշվել է, որ եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 17.04.2023թ.:

**2. Հայցվորի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը.**

Հայցվորը դիմելով Դատարան հայտնել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանը 2021թ. հուլիսի 01-ին նախաձեռնել է թիվ ՀՀ ԳՄ ՎՀ- ՀԲՄԱՇՁԲ-21/04 ծածկագրով հրատապ բաց մրցույթ 1 (մեկ) չափաբաժնով:

Մրցույթի շրջանակներում «ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից և վերջինիս հետ 2021թ. օգոստոսի 24-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի կարիքների համար Վարդենիկ համայնքի ներհամայնքային փողոցների

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

## Վ Ճ Ռ Ե Ց

<<ԱՐՏԴԻԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի՝ թիվ ՀՀ ԳՄ ՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/04 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի թիվ ՀՀ ԳՄ ՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/04 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 27.01.2023թ. որոշումը ճանաչել անվավեր:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանից հօգուտ <<ԱՐՏԴԻԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ, որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանից հօգուտ <<ԱՐՏԴԻԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ի բռնագանձել 70.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**